Զապել Եսայան

Նամակներ Աննա Բուդաղյանին 1

1927, մարտի 13, Լենինական

Աննա Բուդաղյանին

Ստացեր եմ Ձեր նամակը և Շիրվանզադեի նամակը հանձներ եմ իրեն: Երկու օր է որ Լենինական եմ և հիացած եմ այն բոլորով, որ տեսա: Քաղաքը արդեն իսկ ավերված քաղաքի երևույթ չունի: Շնորհիվ Խ. Միության լայն, շատ լայն աջակցության և մյուս հանրապետություններու եղբայրական և շուտափույթ օգնության՝ երկրաշարժի հետևանքները դարմանած են արդեն: Պետք է նաև ըսել, որ տեղվույն իշխանությունը արտակարգ և խղճամիտ եռանդով կազմակերպած է ամեն ինչ: Մեծ տպավորություն ըրավ իմ վրաս գործարանը և Շիրակի ջրանցքը, ուր գացի այսօր հակառակ ճամբու դժվարություններով եղանակի պատճառով: Այս իրիկուն կմեկնիմ Թիֆլիզ, ուրկե կգրեմ դարձյալ Ձեզ: Կուզեմ և ընդարձակ գրել Սիմոնիկին և կմտածեմ Ձեր հասցեին ուղղեք գրությունս:

Տիկին ջան, անշուշտ իմացաք տիկին Յուզբաշյանի մահը: Չեք կարող երևակայել, թե որքան ցավ պատճառեց ինձ: Ճամբա չելած այնքան ուրախությամբ կմտածեի, որ Մոսկվայի մեջ պիտի կրկին տեսնեմ զինքը:

Կխնդրեմ իմ հարգալիր զգացմունքներս հայտնեք Ձեր ամուսնույն, շատ բարևներ Ֆեհրատին և շատ, շատ համբույրներ Ձեզ:

Ձերդ սիրով և հարգանքով

Զապել Եսայան

Յատուկ Դրէմ